

**ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՆԴԻԿՍՈՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր**

<i>Արդար կառավարում: Քաղաքական իրավունքներ</i>			
<b>Ինդիկատորի ենթաբաղադրիչ</b>	<b>Ինդիկատորի կատարողականի վրա ազդող գործոններ</b>	<b>Առաջարկվող գործողություններ/ընթացիկ բարեփոխումներ</b>	<b>Ակնկալվող արդյունք և ժամկետ/նշում կատարման մասին</b>
1. Հանրային վստահություն	1.1. Ընտրական գործընթացի հանդեպ հանրության ունեցած վստահության ակնհայտ պակաս	1.1.1. Հանրային իրազեկման միջոցառումների ուժգնացում և նպատակային ուսուցողական ծրագրերի իրականացում, այդ թվում նաև տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների համար, ուղղված. <ul style="list-style-type: none"> <li>բոլոր քաղաքացիների համար հարկադրումից կամ ահաբեկման որևէ տարբերակից գերծքվեարկության ապահովմանը,</li> <li>քվեի գաղտնիության ապահովմանը՝ ընդգծելով քվեների «առուվաճառքի գործարքների» անիմաստությունը և պետական իշխանությունների կողմից նման երևույթների նկատմամբ անհանդուրժողականությունը</li> </ul>	1.1.1.1. Հասարակական իրազեկման և ուսուցողական ծրագրերի հաստատված ժամանակացույց (2009, 3-րդ եռամսյակ)
2. Ընտրությունների կազմակերպում	2.1. Ընտրությունների կազմակերպումը բավականաչափ թափանցիկ և անկողմնակալ չի իրականացվում	2.1.1. Թեկնածուների վստահված անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ձեռնարկի մշակում	2.1.1.1. Չեռնարկի մշակում և հրապարակում ԿԸՀ կայքում (2009, 3-րդ եռամսյակ)
3. Նախընտրական քարոզչություն	3.1. Նախընտրական քարոզչության ընթացքում բոլոր թեկնածուների համար չեն ապահովվում հավասար պայմաններ	3.1.1. Նախընտրական քարոզչությանը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց մասնակցության պայմանները խախտելու դեպքում պատասխանատվության նորմերի սահմանում	3.1.1.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
		3.1.2. Կուսակցությունների գրասենյակների պետական կամ տեղական ինքնակառավարման	3.1.2.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ

		մարմինների շինություններում տեղակայման արգելում	(2009, 4-րդ եռամսյակ)
		3.1.3. Նախընտրական քարոզչության համար տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն հանդիսացող տարածքների, դահլիճների և շինությունների մատչելիության ապահովում նույն հիմունքներով, ինչ պետական սեփականությունը	3.1.3.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
4. Բողոքարկման ընթացակարգերի մատչելիություն և արդյունավետություն	4.1. Բողոքների ներկայացման ընթացակարգերը բավարար չափով պարզ և մատչելի չեն	4.1.1. ԿԸՀ որոշումների կարգավիճակի հստակեցում (հստակ սահմանելով՝ արդյոք դրանք վարչական որոշումներ են)	4.1.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 4-րդ եռամսյակ)
		4.1.2. Բողոքարկման ընթացակարգերի պարզեցում և հստակեցում	4.1.2.1. Բողոքարկման գործընթացները նկարագրող հրապարակված ձեռնարկ (2009, 4-րդ եռամսյակ) 4.1.2.2. Անհրաժեշտության դեպքում համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
5. Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումը	5.1. Կուսակցությունների ֆինանսավորման մասին դրույթներ օրենսդրությամբ չեն նախատեսվում	5.1.1. Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման մասին դրույթների և դրանք խախտելու համար պատասխանատվության նորմերի սահմանում	5.1.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ) 5.1.1.2. Հանրային քննարկումների կազմակերպում (2009, 4-րդ եռամսյակ) 5.1.1.3. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)

6. Ընդդիմության դերը երկրի քաղաքական կյանքում	6.1. Ընդդիմության դերը պետության քաղաքական կյանքում աննշան է	6.1.1. Ընդդիմության իրավունքների ամրագրման վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում, ըստ անհրաժեշտության ընդդիմության որոշակի իրավունքների ամրագրում օրենսդրությամբ	6.1.1.1. Օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
---	--	---	---

**Արդար կառավարում:** Քաղաքացիական ազատություններ

<b>Ինդիկատորի ենթաբաղադրիչ</b>	<b>Ինդիկատորի կատարողականի վրա ազդող գործոններ</b>	<b>Առաջարկվող գործողություններ/ընթացիկ բարեփոխումներ</b>	<b>Ակնկալվող արդյունք և ժամկետ/նշում կատարման մասին</b>
7. Խոսքի և դավանանքի ազատություն: Լրատվամիջոցների ազատություն և անկողմնակալություն	7.1. Նախընտրական քարոզչության ընթացքում մամուլի ազատությունը սահմանափակված է:	7.1.1. Լրատվամիջոցների կողմից լուսաբանման չափաբաժինների խախտումների դեպքում կուսակցությունների կամ այլ շահագրգիռ կողմերի կողմից բողոքարկման հնարավորության նախատեսում օրենսդրությամբ: Նման քննության արդարացիության ապահովման նպատակով լուսաբանման չափաբաժինները խախտելու դեպքում պատասխանատվության նորմերի և համապատասխան ընթացակարգերի նախատեսում:	7.1.1.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ) 7.1.1.2. Նկարագրված ընթացակարգ (2009, 4-րդ եռամսյակ)
	7.2. Մամուլի ազատությունը սահմանափակված է: Հեռարձակվող մամուլի վրա ուժեղ է իշխանությունների ազդեցությունը: Չափազանց ցածր է լրատվամիջոցների պրոֆեսիոնալիզմի մակարդակը	7.2.1. Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում՝ լրատվամիջոցների ազատության և վերջիններիս կողմից իրադարձությունների անկողմնակալ և բազմակողմանի լուսաբանման, լրատվամիջոցների պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացման միջև հավասարակշռության ապահովման տեսանկյունից, որը կներառի հետևյալ 5 սկզբունքները և դրանց ապահովման մեխանիզմները. <ol style="list-style-type: none"> <li>1. խոսքի ազատության իրավունքի հարգում</li> <li>2. տեղեկատվության արագ և ժամանակին տրամադրում հանրությանը</li> <li>3. լրատվամիջոցների անկախություն</li> <li>4. լրատվամիջոցներում հասարակության մեջ առկա տեսակետների բազմազանության ամբողջական արտացոլում</li> <li>5. լրատվամիջոցների տնտեսական և</li> </ol>	7.2.1.1. Հայեցակարգի և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի մշակում, քննարկում շահագրգիռ կողմերի հետ, ընդունում (2009, 4-րդ եռամսյակ):

		ինստիտուցիոնալ կայուն հիմքեր, ֆինանսական անկախություն	
		7.2.2. Հասարակության բոլոր խավերին լրատվամիջոցների հասանելիության, ինչպես նաև բազմակարծության և հեռարձակվող լրատվամիջոցների ավելի լայն ընտրության հնարավորություն ապահովման նպատակով անցում հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման թվային համակարգին	7.2.2.1. Հանրային քննարկումներ (2009, 1-ին եռամսյակից, շարունակական)
			7.2.2.2. ՀՀ տարածքում հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման թվայնացման ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
		7.2.3. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ձևավորման նոր կարգի մշակում, ինչը կապահովի հասարակական կարծիքի առավել լայն ներգրավվածություն հանձնաժողովում՝ նպաստելով լրատվամիջոցների բազմակարծության մակարդակի բարելավմանը	7.2.3.1. «Հեռուստատեսության և ռադիոյի» մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենք, որը նախատեսում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ձևավորման նոր կարգ (2009, 1-ին եռամսյակ)
		7.2.4. Լրատվամիջոցների ֆինանսավորման մեխանիզմների մշակում: Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա զանգվածային լրատվամիջոցների սեփականության կոնցենտրացիայի սահմանափակման միջոցների կիրառման հնարավորության քննարկում	7.2.4.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 4-րդ եռամսյակ) 7.2.4.2. Օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
		7.2.5. Ջրպարտության և վիրավորանքի հանցակազմների շրջանակների վերանայում	7.2.5.1. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (2009, 2-րդ եռամսյակ)

		7.2.6. Բարոյական վնասի ինստիտուտի ներդրում	7.2.6.1. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (2009, 3-րդ եռամսյակ)
		7.2.7. Լրագրողի էթիկայի պարտադիր կիրառման կանոնների ընդունում, որը կներառի նաև էթիկայի նորմերը խախտելու դեպքում պատասխանատվության միջոցներ և դրանց կիրառման մեխանիզմներ, ինքնակարգավորման մեխանիզմների սահմանում	7.2.7.1. Ինքնակարգավորման նկարագրված մեխանիզմներ (2009, 3-րդ եռամսյակ) 7.2.7.2. Լրագրողի էթիկայի կանոններ (2009, 4-րդ եռամսյակ)
	7.3. Թերի են ՀՀ օրենսդրությամբ սահմանված զանգվածային լրատվամիջոցների լիցենզիայի մերժման մեխանիզմները և պայմանները	7.3.1. Հեռուստառադիոընկերությունների գրանցման (լիցենզավորման) մերժման հիմքերի հստակեցում և մերժման հիմնավորվածությունն ապահովող մեխանիզմների սահմանում	7.3.1.1. Օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)
8. Միավորումներ կազմելու և կազմակերպչական իրավունքներ	8.1. Ցույցեր և երթեր անցկացնելու իրավունքը պրակտիկայում հաճախ սահմանափակվում է	8.1.1. Լիազոր մարմնի կողմից ցույցեր և երթեր անցկացնելու թույլտվության մերժման հիմքերի և պայմանների հստակեցում	8.1.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 2-րդ եռամսյակ) 8.1.1.2. Ըստ անհրաժեշտության օրենսդրական փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)
	8.2. Մարզերում բնակվողները հասարակական կազմակերպությունների գրանցման համար ստիպված են ներկայանալ Երևան	8.2.1. Մարզերում իրավաբանական անձանց /հասարակական կազմակերպությունների գրանցման համակարգի ներդրում	8.2.1.1. Օրենսդրական համապատասխան փոփոխություններ, ներդրված համակարգ (2009, 4-րդ եռամսյակ)

	8.3. Չնայած հասարակական կազմակերպությունները հարկվում են նույն սկզբունքով, ինչ առևտրային կազմակերպությունները, վերջիններիս արգելվում է ուղղակիորեն մասնակցել գործարարական գործունեությանը, ստանալ ուղղակի եկամուտներ, մասնակցել պետական տեղեկատվության	8.3.1. Հասարակական կազմակերպությունների գործունեության և հարկման սկզբունքների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրում և օրենսդրական համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկների ներկայացում	8.3.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 2-րդ եռամսյակ) 8.3.1.2. Քննարկման ներկայացված առաջարկներ (2009, 3-րդ եռամսյակ) 8.3.1.3. Օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
9. Անձնական անկախություն և անհատական իրավունքներ	9.1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք ունեն գործարարական գործունեությամբ զբաղվելու իրավունք, սակայն պրակտիկայում խոչընդոտներ են առաջանում կոռումպացված դատական իշխանության և անարդարացի մրցակցության առումով Արդյունաբերական հիմնական ուղղությունները գտնվում են քիչ թվով մարդկանց ձեռքում, ովքեր արտոնություններ են ունեցել մասնավորեցման վաղ շրջանում	9.1.1. Գործարար միջավայրի բարելավման ծրագրերն ուղղված են այս ցուցանիշների բարելավմանը (տես Գործարարությամբ զբաղվելը Հայաստանում բարեփոխումների հուշագրի հիման վրա կազմված գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիր, Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագիծ)	9.1.1.1. Ըստ գործարար միջավայրի բարելավման միջոցառումների և Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային ծրագրերի (ծրագրերը կցվում են)
<b>Արդար կառավարում:</b> Կառավարման արդյունավետություն			
<b>Ինդիկատորի ենթաբաղադրիչ</b>	<b>Ինդիկատորի կատարողականի վրա ազդող գործոններ</b>	<b>Առաջարկվող գործողություններ/ընթացիկ բարեփոխումներ</b>	<b>Ակնկալվող արդյունք և ժամկետ/նշում կատարման մասին</b>
10. Հանրային ֆինանսների կառավարում	10.1. Ծրագրային բյուջետավորման և հաշվապահական հաշվառման բարեփոխումները դանդաղ են ընթանում և դեռևս չեն ընդգրկում	10.1.1. Ծրագրային բյուջետավորման ներդրման բարեփոխումների շարունակում և աշխատանքների ընդգրկվածության ընդլայնում	10.1.1.1. Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների գործընթացում ընդգրկված առնվազն 10 փորձ-

	բոլոր պետական մարմինները		նական պետական կառավարման մարմիններում ծրագրային դասակարգման բարելավված գործընթաց (2009, 4-րդ եռամսյակ)
		10.1.2. Հանրային ֆինանսների կառավարման միասնական տեղեկատվական համակարգի կիրառում	10.1.2.1. ՀՖԿՏՀ մշակված նախագիծ և վերապատրաստված մասնագետներ (2009, 4-րդ եռամսյակ)
	10.2. Ներքին աուդիտի համակարգը չի համապատասխանում միջազգային չափանիշներին	10.2.1. Ներքին աուդիտի համակարգի զարգացման ռազմավարության իրականացում միջազգային լավագույն փորձին համապատասխան	10.2.1.1.. Հաստատված ռազմավարություն (2009, 2-րդ եռամսյակ) 10.2.1.2. Հանրային հատվածի ներքին աուդիտի ընդունված ստանդարտներ և դրանց կիրառման ձեռնարկներ(2009, 2-րդ եռամսյակ) 10.2.1.3. Ձևավորված իրավական դաշտ (2009, 2-րդ եռամսյակ)
	10.3. Աղքատության հաղթահարման գործընթացներում ցածր է համագործակցության և գործընկերության մակարդակը	10.3.1. Աղքատության հաղթահարման գործընթացներում հաշվետվողականության, համագործակցության և գործընկերության բարելավման մեխանիզմների մշակում ու ներդրում, ՀՀ կայուն զարգացման ռազմավարական ծրագրի մոնիտորինգի և գնահատման ինստիտուցիոնալացում, էլեկտրոնային համակարգի ներդրում՝ հասարակության և բոլոր շահառուների համար հասանելի ինտերնետ միջավայրում	10.3.1.1. ԿԶԾ իրականացման միջոցառումների հաստատված ծրագիր (2009, 1-ին եռամսյակ) 10.3.1.2. ԿԶԾ մոնիտորինգի և գնահատման հաստատված ցուցանիշներ (2-րդ եռամսյակ) 10.3.1.3. ԿԶԾ կատարման հաշվետվությունների և մոնիտորինգային ցուցանիշների տեղադրման նպատակով պորտալի ստեղծում հետադարձ կապի ապահովմամբ (3-րդ եռամսյակ)
11. Հանրային վարչարարության որակը	11.1. Ցածր է պետական մարմինների գործունեության արդյունավետությունը: Քաղաքացիական ծառայության ոլորտում վարձատրությունը	11.1.1. Կոմպետենտության վրա հիմնված քաղաքացիական ծառայության համակարգի ձևավորում, ներառյալ.	

	կախված չէ կատարողականի արդյունքներից		
		ա) պետական կառավարման մարմիններում ռազմավարական ծրագրերի հիման վրա տարեկան աշխատանքային ծրագրերի մշակման համակարգի ներդրում	11.1.1. ա) 1. Պետական կառավարման երկու մարմիններում պիլոտային կարգով ներդրված տարեկան աշխատանքային ծրագրերի համակարգ (2009, 3-րդ եռամսյակ)
		բ) աշխատանքի կատարողականի գնահատման համակարգի ներդրում	11.1.1. բ) 1. Պետական կառավարման երկու մարմիններում պիլոտային կարգով ներդրված կատարողականի գնահատման համակարգ (2009, 3-րդ եռամսյակ)
		գ) աշխատանքի որակի և աշխատավարձերի մասնավոր հատվածի նկատմամբ մրցունակության աստիճանական բարձրացման նպատակով աշխատանքի կատարողականի վրա հիմնված վարձատրության (խրախուսման) համակարգի ներդրում	11.1.1. գ) 1. Աշխատանքի կատարողականի վրա հիմնված վարձատրության համակարգ՝ ներդրված պետական կառավարման երկու պիլոտային մարմիններում (2009, 4-րդ եռամսյակ)
		դ) մրցույթների իրականացման համակարգի կատարելագործում և ապակենտրոնացում	11.1.1. դ) 1. Մրցույթների իրականացման նոր ապակենտրոնացված համակարգ (2009, 3-րդ եռամսյակ)
		ե) պաշտոնների անձնագրերի կատարելագործում՝ պետական կառավարման մարմինների նպատակներին համապատասխան	11.1.1. ե) 1. Նոր պաշտոնների անձնագրեր պետական կառավարման երկու պիլոտային մարմիններում (2009, 3-րդ եռամսյակ)
12. Հանրային ծառայությունների մատուցում	12.1. Ցածր է պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը	12.1.1. Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի չափանիշների, ինչպես նաև որակի չափանիշների պահպանման նկատմամբ	12.1.1.1. Ծառայությունների որակի հաստատված չափորոշիչներ(2009, 3-րդ եռամսյակ)

		հսկողական մեխանիզմների սահմանում	12.1.1.2. Որակի չափանիշների մոնիտորինգի համակարգ (2009, 3-րդ եռամսյակ)
		12.1.2. Էլեկտրոնային պետական կառավարման համակարգերի ներդրում	12.1.2.1. Էլեկտրոնային պետական կառավարման համակարգերի ներդրման հաստատված ծրագիր (2009, 2-րդ եռամսյակ)
<b>Արդար կառավարում:</b> Կոռուպցիայի վերահսկողություն			
<b>Ինդիկատորի ենթաբաղադրիչ</b>	<b>Ինդիկատորի կատարողականի վրա ազդող գործոններ</b>	<b>Առաջարկվող գործողություններ/ընթացիկ բարեփոխումներ</b>	<b>Ակնկալվող արդյունք և ժամկետ/ նշում կատարման մասին</b>
13. Պետական ծախսերի կառավարման արդյունավետություն	13.1. Պետական գնումներին դիմելու գործառնական ծախսերը մնում են բարձր և ընթացակարգերը կոռուպցիայի բացառման տեսակետից (ներառյալ մրցույթի մասնակիցների միջև պայմանավորվածությունները) բարելավման կարիք ունեն	13.1.1. Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրում, գնումների գործընթացի թափանցիկության ապահովում և համապատասխանեցում միջազգային չափանիշներին	13.1.1.1. Էլեկտրոնային մրցույթների իրականացում (2009)
			13.1.1.2. Էլեկտրոնային գնումների իրականացման նկարագրված և հաստատված բիզնես գործընթացներ (2009, 4-րդ եռամսյակ)
			13.1.1.3. ԱՀԿ շրջանակներում Պետական գնումների համաձայնագրին միանալու գործընթացի սկսում (2009, 1-ին եռամսյակ)
			13.1.2.1. Օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)
		13.1.2. Գնումների գործընթացում շահերի բախման ինստիտուտի կատարելագործում՝ ոչ պաշտոնական վճարումների (հանրային ծախսեր և կառավարման արդյունավետություն) հետ կապված շահերի բախման ինստիտուտից առանձին:	
		13.1.3. Գնումների գործընթացի խախտումների հետ կապված տույժերի գանձման համակարգի ներդրում	13.1.3.1. Օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)
		13.1.4. Թրանսպարենսի ինթերնեշնլի Ինթեգրիթի պակտ գործիքի ներդրման հնարավորության	13.1.4.1. Քննարկման ներկայացված առաջարկներ

		ուսումնասիրում և առաջարկների ներկայացում	(2009, 2-րդ եռամսյակ)
		13.1.5. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին (IPSAS) համապատասխան՝ պետական հատվածում հաշվապահական հաշվառման համակարգի ներդրում	13.1.5.1. Ստանդարտների ընդունում (2009, 2-րդ եռամսյակ)
14. Պետական եկամուտների կանխատեսելիություն	14.1. Հարկերի հավաքումը անարդյունավետ է իրականացվում, ինչի արդյունքում զարգացած երկրների համեմատությամբ շարունակում է չափազանց ցածր մնալ ՀՆԱ-ում հարկային եկամուտների մասնաբաժինը: Բարձր են ստվերային տնտեսության ծավալները: Կազմակերպությունների և անհատ ձեռներեցիների կողմից վճարվող հարկերը հաճախ չեն համապատասխանում տնտեսական գործունեության իրական ծավալներին	14.1.1. Ստվերային տնտեսության դեմ պայքարի ծրագրի մշակում և ընդունում	14.1.1.1. Հաստատված ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
	14.2. Հարկային օրենսդրությունը բարդ է, հաճախ հստակ չէ կիրառողների համար	14.2.1. Հարկային օրենսդրության կողիֆիկացում և պարզեցում	14.2.1.1. Հարկային օրենսգիրք (2009, 2-րդ եռամսյակ)
	14.3. Հարկային և մաքսային համակարգերում միասնականության և կարողությունների ամրապնդման ջանքերի անհրաժեշտություն կա՝ նվազեցնելու համար հարկատուի և պաշտոնյայի շփումը: Հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերը կոռուպցիոն ռիսկեր են կրում:	14.3.1. Հարկային վարչարարության պարզեցում, աստիճանաբար անցում կամավոր վճարման համակարգի	14.3.1.1. Ներդրված ծրագիր (2009, 1-րդ եռամսյակ) 14.3.1.2. Առաջընթացի ներկայացում՝ կոնկրետ վիճակագրությամբ (2009, 3-րդ եռամսյակ)
		14.3.2. Հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ընդունման համակարգի ներդրում	14.3.2.1. Ներդրված համակարգ Հաշվետվությունների ներկայացում էլեկտրոնային եղանակով (2009, 2-րդ եռամսյակ)

		14.3.3. Ուսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում:	14.3.3.1. Ներդրված համակարգ (2009, 4-րդ եռամսյակ)
		14.3.4. Հարկային և դրանց հետ միասին ներկայացվող ֆինանսական հաշվետվություններում բացահայտվող տեղեկությունների կազմի և բովանդակության վերանայում՝ ըստ դրանց անհրաժեշտության, մատչելիության և օգտակարության:	14.3.4.1. Հարկային և դրանց հետ միասին ներկայացվող ֆինանսական հաշվետվություններին ներկայացվող նոր պահանջներ (2009, 2-րդ եռամսյակ)
		14.3.5. Կազմակերպությունների կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ավելի քիչ թվով գերատեսչությունների, որտեղ դրանք առավել անհրաժեշտ են: Պետական մարմինների միջև տվյալների փոխանակման գործում համակարգի ներդրում: Մոտ ապագայում նաև տվյալների ընդհանուր բազայի ստեղծում:	14.3.5.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ) 14.3.5.2. Տվյալների փոխանակման ներդրված համակարգ (2009, 4-րդ եռամսյակ)
	14.4. Հարկային ադմինիստրացիայի կոռումպացվածության մակարդակը չափազանց բարձր է, հարկ վճարողների սպասարկման մակարդակը՝ չափազանց ցածր	14.4.1. Հարկային օրենսդրության, վարչարարության, հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	14.4.1.1. Հարկ վճարողների համար հասարակական իրազեկման ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
		14.4.2. Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում միջազգային չափանիշներին համապատասխան	14.4.2.1. Հարկ վճարողների սպասարկման ռազմավարություն (2009, 2-րդ եռամսյակ) 14.4.2.2. Հարկ վճարողների սպասարկման կենտրոնի հիմնում (2009, 3-րդ եռամսյակ)
		14.4.3. Թեժ գծերի բացում կառավարությունում և ԿԱ հարկային պետական ծառայությունում, ներառյալ. <ul style="list-style-type: none"> <li>• թեժ գծի բացում կառավարությունում և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում,</li> </ul>	14.4.3.1. Կատարված է մասնակիորեն: Թեժ գիծ գործում է Կառավարությունում և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում (2009, 1-ին եռամսյակ)

		<ul style="list-style-type: none"> <li>• թեժ գծով ստացված տեղեկատվության ստուգում, վերլուծություն, ամփոփում և ներկայացում համապատասխան պատկան մարմիններին</li> </ul>	14.4.3.2. Թեժ գծով ստացված տեղեկատվության ընդունման, ստուգման, վերլուծություն, ամփոփում և համապատասխան պատկան մարմիններին ներկայացման կարգ (2009, 1-ին եռամսյակ)
	14.5. Մաքսային ձևակերպումների կատարման ընթացակարգերը երկար են տևում, հաճախ պաշտոնատար անձանց կողմից պահանջվում է ոչ պաշտոնական վճարումների կատարում	14.5.1. Մաքսային ընթացակարգերի պարզեցում՝ մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատում, արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների և մաքսային ծառայողների միջև շփումների նվազեցում	14.5.1.1. Ձևակերպումների և պահանջվող ընթացակարգերի նկարագրում (2009, 2-րդ եռամսյակ) 14.5.1.2. Պարզեցված ընթացակարգեր (2009, 4-րդ եռամսյակ)
		14.5.2. Արդյունավետ հետքացթողումային հսկողության ընթացակարգերի սահմանում, ներմուծումների ընդհանուր շրջանառության մեջ գործարքի գնի մեթոդով որոշվող ներմուծման մաքսային հայտարարագրերի տեսակարար կշռի ավելացում: Տեղեկատվության արդյունավետ փոխանակման նպատակով օտարերկրյա պետությունների, մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ միջկառավարական պայմանագրերի կնքում	14.5.2.1. Բոլոր մաքսատներում և մաքսային կետերում ինքնագնահատման համակարգի ներդրում և մաքսային ռիսկի գնահատման նոր չափորոշիչներ (2009, 4-րդ եռամսյակ) 14.5.2.2. Օտարերկրյա պետությունների, մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ կնքված միջազգային պայմանագրեր (2009, 4-րդ եռամսյակ) 14.5.2.3. Ներմուծումների ընդհանուր շրջանառության մեջ գործարքի գնի մեթոդով որոշվող ներմուծման մաքսային հայտարարագրերի տեսակարար կշռի ավելացում (2009, 4-րդ եռամսյակ)
15. Ոչ պաշտոնական վճարումների կանխարգելումը հանրային	15.1. Կոմունալ, կրթական, առողջապահական, ոստիկանական, գյուղատնտեսական, պետական և	15.1.1. Շահերի բախման համակարգի ներդրում, ներառյալ.	15.1.1.1. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարություն (2009, 2-րդ եռամսյակ),

<p>Ծառայությունների մատուցման գործընթացում</p>	<p>տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայություններ ստանալու համար դեռևս չսահմանված ծախսեր (կաշառք) են պահանջվում</p>	<ul style="list-style-type: none"> <li>• շահերի բախման վերաբերյալ հայտարարագրման մեխանիզմներ,</li> <li>• ստուգման և վերահսկողության մեխանիզմներ,</li> <li>• պատասխանատվություն սահմանող նորմեր և կիրառման մեխանիզմներ</li> </ul>	<p>15.1.1.2. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք և օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)</p>
		<p>15.1.2. Պետական մարմինների աշխատողների վարքագծի կանոնների (ոչ պաշտոնական վճարումները կանխող) ներդրման մեխանիզմների և կարգապահական միջոցների կատարելագործում և ներդրում, դրանք խախտելու համար պատասխանատվության խիստ միջոցների նախատեսում՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատում</p>	<p>15.1.2.1. Վարքագծի կանոններ՝ ներդրված բոլոր պետական մարմիններում (2009, 2-րդ եռամսյակ)</p>
		<p>15.1.3. Արագ արձագանքման (օր. թեժ գիծ, քաղաքացիների ընդունարաններ) հստակ մեխանիզմների ներդրում հանրային ծառայությունների սակագները կարգավորող հանձնաժողովի, սպառողների իրավունքները ներկայացնող միությունների և տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի շրջանակներում</p>	<p>15.1.3.1. ՀՀ տարածքում ԵԱՀԿ աջակցությամբ բացվածանվճար իրավաբանական օգնություն տրամադրող արագ արձագանքման հակակոռուպցիոն հանրային ընդունարանների թվի և աշխարհագրության ընդլայնում (2009, 4-րդ եռամսյակ)</p> <p>15.1.3.2. Սպառողների իրավունքների պաշտպանության նոր հայեցակարգ (2009, 2-րդ եռամսյակ)</p>
		<p>15.1.4. Կոմունալ ծառայությունների մատուցման հետ կապված ընթացակարգերում «մեկ պատուհանի կանգառի» սպասարկման համակարգի ներդրման մեխանիզմների մշակում</p>	<p>15.1.4.1. Նկարագրված նոր համակարգ (2009, 4-րդ եռամսյակ)</p>
		<p>15.1.5. Կրթության (մասնավորապես բարձրագույն և միջին մասնագիտական կրթության) ֆինանսավորման նոր համակարգի ներդրում՝ պետական պատվերի շրջանակում ֆինանսավորելով ոչ թե համալսարաններին, այլ ձևավորելով ուսանողներին դրամաշնորհման մրցակցային</p>	<p>15.1.5.1. Համակարգի ներդրման հաստատված ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)</p>

		համակարգ	
		15.1.6. Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության համար միասնական ավարտական քննությունների անցկացում	15.1.6.1. Ներդրված համակարգ (2009, 3-րդ եռամսյակ)
		15.1.7. Բժշկական հաստատություններում կորպորատիվ կառավարման համակարգի ներդրում	15.1.7.1. Կորպորատիվ կառավարման կամավոր կիրառման կոդեքս (2009, 4-րդ եռամսյակ) 15.1.7.2. Պետական բժշկական հաստատություններում ներդրման ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
		15.1.8. Առողջապահական հաստատությունների և դրանց հաճախորդների միջև տեղեկացվածության և կանոններին խստորեն հետևելու մշակույթի ձևավորում՝ կապված հիմնական փաթեթով ծածկվող եկամուտների առավելությունների և հատուկ ծառայությունների արժեքի հետ՝ ոչ պաշտոնական վճարումները կանխելու նպատակով	15.1.8.1. Կանոնների և դրանց կիրառման ապահովող ծրագրի, վերահսկողության մեխանիզմների մշակում, ընդունում, լուսաբանում (2009, 4-րդ եռամսյակ)
		15. 1.9. Ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների (գրանցման, հաշվառման) առավելագույնս էլեկտրոնայնացման համակարգի ապահովում՝ նվազագույնի հասցնելով սպառողների հետ անմիջական շփումները	15.1.9.1. Ներդրված համակարգ (2009, 3-րդ եռամսյակ)
16. Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ	16.1. 2003-2007 թթ Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի ներքո ընդունված օրենսդրական փոփոխությունները և ստանձնած միջազգային պարտավորությունները դեռևս մինչև վերջ ներդրված չեն	16.1.1. 2008 -2012թթ հակակոռուպցիոն ռազմավարության ընդունում՝ ուղղված համակարգային կոռուպցիայի կամ դրա տարածվածությունից ձերբազատմանը	16.1.1.1. ՀԿՌ- և միջոցառումների ծրագրի ընդունում՝ համաձայն հակակոռուպցիոն հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցի (2009, 1-ին եռամսյակ)
		16.1.2. Կոռուպցիայի գնահատման և մոնիտորինգի սեփական համակարգի ձևավորում	16.1.2.1. Թափանցիկ մոտեցմամբ մոնիտորինգի համակարգի ներդրում (2009, 4-րդ եռամսյակ)

		16.1.3. Միջազգային պարտավորությունների իրականացման վերաբերյալ ինքնագնահատման և կանոնավոր կերպով հաշվետվություններ ներկայացնելու մեխանիզմների մշակում	16.1.3.1. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին ներկայացվող հատուկ հաշվետվություններ (2009, 3-րդ եռամսյակ)
		16.1.4. Կարգավորման ազդեցության գնահատման, մասնավորապես՝ հակակոռուպցիոն ռիսկերի ազդեցության գնահատման ինստիտուտի ներդրում:	16.1.4.1. Ներդրված ինստիտուտ (2009, 4-րդ եռամսյակ)
	16.2. Քաղաքացիների կողմից իրենց իրավունքներն ընկալելուն կոռուպցիոն դեպքերի մասին հայտնելու վստահելի մեխանիզմներ դեռևս չեն ձևավորվել	16.2.1. Իրավապահ մարմիններին կոռուպցիոն դեպքերի մասին հայտնելու հրապարակային և թափանցիկ համակարգի ձևավորում	16.2.1.1. Ստացված և ընթացք ստացած դեպքերի վերաբերյալ հրապարակված եռամսյակային ընթացակարգեր (2009, 3-րդ եռամսյակ)
		16.2.2. Վկաների, կոռուպցիայի գոհերի և առանց իրենց անձը բացահայտելու տեղեկատվություն տրամադրողների պաշտպանության արդյունավետության բարձրացում, ինչպես նաև անվտանգության երաշխիքների սահմանում	16.2.2.1. Ծախսերի և եկամուտների վերլուծություն, անրաժեշտության դեպքում վկաների և գոհերի պաշտպանությունը ուժեղացնելու, անվտանգության երաշխիքների սահմանման գործողությունների ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
		16.2.3. Էլեկտրոնային կառավարման համակարգի ներքո պետական կառավարման մարմինների էլեկտրոնային կայքերին ներկայացվող միասնական պահանջների ձևավորում	16.2.3.1. Միասնական պահանջների սահմանման և ներդրման ծրագրի ընդունում, հատկապես ինտերակտիվ հարց ու պատասխանի ինստիտուտի ձևավորում (2009, 4-րդ եռամսյակ)
<i>Արդար կառավարում:</i> Օրենքի գերակայություն			
<b>Ինդիկատորի ենթաբաղադրիչ</b>	<b>Ինդիկատորի կատարողականի վրա ազդող գործոններ</b>	<b>Առաջարկվող գործողություններ/ընթացիկ բարեփոխումներ</b>	<b>Ակնկալվող արդյունք և ժամկետ/ նշում կատարման մասին</b>

<p>17. Դատական իշխանության անկախություն</p>	<p>17.1. Մեծ է գործադիր իշխանության ազդեցությունը դատական իշխանության նկատմամբ, մասնավորապես դատական որոշումների կայացման առումով</p>	<p>17.1.1. Դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման թափանցիկության և վերահսկելիության ապահովում. դատավորների ֆինանսական միջոցների թափանցիկության ապահովման գործում Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի դերը բարձրացնելու, այդ թվում՝ քաղաքացիների և ֆիզիկական անձանց հաղորդումների հիման վրա էթիկայի հանձնաժողովի կողմից դատավորների ֆինանսական թափանցիկության հարցեր քննարկելու հնարավորությունը նախատեսելու, այդպիսի հաղորդումների քննարկման հստակ ընթացակարգեր սահմանելու միջոցով:</p>	<p>17.1.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ)</p> <p>17.1.1.2. Ըստ անհրաժեշտության օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)</p>
	<p>17.2. Պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն իրականացման շրջանակը հստակ չէ և չափազանց նեղ է</p>	<p>17.2.1. Անվճար իրավաբանական օգնություն ստացող սուբյեկտների և հատկացման հիմքերի շրջանակի ընդլայնում և հստակեցում</p>	<p>17.2.1.1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (2009, 2-րդ եռամսյակ)</p>
<p>18. Դատական համակարգի արդյունավետություն</p>	<p>18.1. Դատական գործերի քննության ընթացակարգերը շատ բազմազան են, ընթանում են դանդաղ և ձգձգված</p>	<p>18.1.1. Դատական գործերի քննության ընթացակարգերի վերանայում. ընթացակարգերի պարզեցում և կրճատում, քննության ժամկետների վերանայում, արագացված դատաքննության ինստիտուտի կիրառման ընդլայնում: Պրակտիկայում վերոհիշյալ ինստիտուտների կիրառելիության ապահովում՝ կիրառման նկատմամբ վերահսկողական մեխանիզմների ներդրման միջոցով</p>	<p>18.1.1.1. Կատարված օրենսդրական փոփոխությունների հիման վրա պարզեցված ընթացակարգերի պրակտիկ կիրառման խոչընդոտների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական նոր փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ)</p>

		<p>18.1.2. Վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառման ընդլայնում. արբիտրաժի՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային միջոցի կիրառման շրջանակների որոշակիացում, կարգավորումների հստակեցում, արբիտրաժային քննության դիմելու հնարավորության ընդլայնում, հաշտեցման գործընթացի միասնական կարգավորում և հաշտեցման ինստիտուտի կիրառման ոլորտների ընդլայնում:</p>	<p>18.1.2.1. Վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառման ընդլայնմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր ծրագիր (2009, 3-րդ եռամսյակ)</p>
	<p>18.2. Դատական որոշումների կատարման արդյունավետության մակարդակը ցածր է, մասնավորապես ֆինանսական պատասխանատվության, աշխատավարձերի և պարտքերի վճարման հետ կապված հարցերով</p>	<p>18.2.1. Դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետությունը բարձրացնող այլընտրանքային մեխանիզմների մշակում և ներդրում, հարկադիր կատարման որոշ գործառնություններ մասնավոր սեկտորին փոխանցելու և պետական վերահսկման մեխանիզմների բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա առաջարկների ներկայացում:</p>	<p>18.2.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ)</p> <p>18.2.1.2. Ըստ անհրաժեշտության օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)</p>
		<p>18.2.2. Հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու հնարավորության բարձրացում. պարտապանի գույքի հետախուզում հայտարարելու հարցում հարկադիր կատարողի լիազորությունները հստակեցնելու, պարտապանի գույքի հայտնաբերման միջոցները վերանայելու, պարտատիրոջ կողմից պարտապանին պատկանող</p>	<p>18.2.2.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ)</p>

		գույք հայտաբերելու վերաբերյալ պարտատիրոջ տեղեկատվությունը ստուգելու կարգը հստակեցնելու, հարկադիր կատարողների համար բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը և դրա պայմանները, այդ թվում՝ առևտրային բանկերից տեղեկություններ ստանալու գործընթացը օրենսդրորեն հստակ կանոնակարգելու միջոցով:	18.2.2.2. Ըստ անհրաժեշտության օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
		18.2.3. ՀՀ արդարադատության նախարարության շրջանակներում իրականացվող վերահսկողության մեխանիզմների բարելավում. դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդների վերանայում, դրանց արդյունքների ամփոփման ընթացակարգեր սահմանելու, կարգապահական վարույթի նյութեր նախապատրաստելու և վարույթ հարուցելու միասնական կարգ, տիպային ձևեր և ժամկետներ նախատեսելու, ծառայողների խրախուսման և պարսավանքի գործող եղանակները վերանայելու և նոր եղանակներ ներդնելու միջոցով:	18.2.3.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ) 18.2.3.2. Ըստ անհրաժեշտության օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
	18.3. Գյուղական համայնքների բնակիչների համար սահմանափակված է դատարան դիմելու մատչելիությունը, հայց ներկայացնելու համար նրանք ստիպված են քաղաք ներկայանալ	18.3.1. Դատարանների ծանրաբեռնվածության ուսումնասիրում՝ գործերի տարածքային բաշխվածության տեսանկյունից: Այլ երկրների փորձի ուսումնասիրության հիման վրա դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և բնակչության համար մատչելիության ապահովման առաջարկների մշակում:	18.3.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր (2009, 2-րդ եռամսյակ)
	18.4. Դատական համակարգի գործունեության արդյունավետության հանրային ընկալումը ցածր է:	18.4.1. Դատական իշխանության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացում. կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնությունը նվազեցնելու, որպես խրախուսման միջոց քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ	18.4.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների

		<p>օրենսդրական դրույթները վերանայելու, վկաների, այդ թվում՝ դատական ծառայող հանդիսացող վկաների, պաշտպանության առկա ընթացակարգերը հատակեցնելու և նոր միջոցներ ներդնելու, կաշառքի պրովոկացիայի հանցակազմը և կարգավորումները վերանայելու և հատակեցնելու, կաշառք տալու նմանակման և օպերատիվ փորձարարության իրականացման պայմանները միջազգային լավագույն պրակտիկային համապատասխան հատակ կարգավորման ենթարկելու, այդ թվում՝ օպերատիվ փորձարարությունը միայն կաշառքի ստացման հանցագործության նախապատրաստման կամ սկզբի մասին օպերատիվ տեղեկությունների կամ կաշառքի շորթման փորձի վերաբերյալ հաղորդման առկայության դեպքում թույլատրելու, ինչպես նաև օպերատիվ փորձարարության շրջանակներում դատավորի մոտ կաշառք ստանալու մտադրության, համոզմունքի ձևավորմանն ու դրսևորմանն ուղղված ակտիվ գործողությունները բացառելու և պլանային ստուգման կարգով օպերատիվ փորձարարությունը տվյալ դատավորի կողմից կոնկրետ հանցագործության կատարման նախապատրաստության կամ հանցագործությունն արդեն սկսված լինելու մասին օպերատիվ ճանապարհով ստացված տեղեկությունների բացակայության դեպքում բացառելու, դատական համակարգում կոռուպցիայի դեպքերի վերաբերյալ օպերատիվ տեղեկությունների ստացման միջոցները վերանայելու, տեղեկությունների ստացման հատուկ միջոցներ, այդ թվում՝ դատարան այցելող անձանց անանուն հարցումներ, ներդրելու միջոցով:</p>	<p>միջոցով (2009, 3-րդ եռամսյակ) 18.4.1.2. Ըստ անհրաժեշտության օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)</p>
		<p>18.4.3. Դատավորների թեկնածուների նախնական ուսուցման և դատավորների վերապատրաստման գործընթացի բարելավում՝ վերապատրաստման ծրագրում կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին, ինչպես նաև դատավորի վարքագծի</p>	<p>18.4.3.1. Հաստատված ծրագիր (2009, 3-րդ եռամսյակ)</p>

		կանոններին վերաբերող ուղղություններ:	
		18.4.4. Դատական համակարգի գործունեության վերաբերյալ հաղորդաշարի պատրաստում և հեռարձակում	18.4.4.1. Պարբերաբար հեռարձակվող հաղորդաշար (2009, 3-րդ եռամսյակ)
19. Դատական իշխանության արդարացիությունը և հաշվետվողականությունը	19.1. Դատական որոշումները հաճախ արդարացի, անկողմնակալ և հիմնավորված չեն լինում, ցածր է դատական որոշումների կանխատեսելության մակարդակը	19.1.1. Օրենքի միատեսակ կիրառման ապահովում	19.1.1.1. Կատարված օրենսդրական փոփոխությունների (Դատական օրենսգիրք, հոդված 50) հիման վրա օրենքի միատեսակ կիրառման պրակտիկ ապահովմանը խոչընդոտող խնդիրների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր (2009, 3-րդ եռամսյակ)
	19.2. Դատավորների կողմից իշխանության չարաշահումը կամ օրենքի խախտումները հազվադեպ են քրեական կամ վարչական գործի քննության առարկա դառնում և լուսաբանվում: Դատական իշխանությունը զգայուն է մասնավոր շահերի միջամտությունների նկատմամբ	19.2.1. Դատավորի գործունեության նյութական և սոցիալական երաշխիքների բարելավում՝ միաժամանակ խստացնելով դատական իշխանություն իրականացնելիս թույլ տված խախտումների համար պատասխանատվությունը՝ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեության ցանկացած ձևով միջամտելու հանցակազմի օբյեկտիվ կողմն ընդլայնելու և նշված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը խստացնելու, ինչպես նաև դատավորի կողմից դատական իշխանության իրականացմանը օրենքով չնախատեսված միջամտության դեպքերի մասին էթիկայի հանձնաժողովին չհայտնելը քրեականացնելու միջոցով:	19.2.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ)
			19.2.1.2. Ըստ անհրաժեշտության օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
	19.3. Ցածր է մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ակտիվության մակարդակը, մասնավորապես հազվադեպ է	19.3.1. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունավետության բարձրացման ծրագրի մշակում և իրականացում	19.3.1.1. Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշակված ծրագիր (2009, 3-րդ եռամսյակ)

	<p>իրավասու պետական մարմիններին առաջարկվում կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել պաշտոնատար այն անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները կամ օրենքի պահանջները</p>		
	<p>19.4. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը չի գործում բավականաչափ հրապարակային</p>	<p>19.4.1. Ներկայացված բողոքների ընթացքի մասին հասարակությանը տեղեկացնելու ընթացակարգի սահմանում</p>	<p>19.4.1.1. Սահմանված ընթացակարգ (2009, 2-րդ եռամսյակ)</p>
		<p>19.4.2. ՀՀ վարչապետի կողմից գործադիր իշխանությանը հանձնարարականի ուղղում՝ Մարդու իրավունքների պաշտպանի յուրաքանչյուր առաջարկի կամ քննադատության վերաբերյալ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• խնդրի խորը ուսումնասիրություն,</li> <li>• լուծման ելքերի առաջարկների մշակում,</li> <li>• Մարդու իրավունքների պաշտպանի հետ շահագրգիռ քննարկում</li> <li>• քննարկումների ընթացքի և արդյունքների լայն լուսաբանում:</li> </ul>	<p>19.4.2.1. ՀՀ վարչապետի հանձնարարականի և դրա կատարման վերահսկողության մեխանիզմների հրապարակում (2009, 1-ին եռամսյակ)</p>
<p>20. Գործադիր իշխանության հաշվետվողականություն</p>	<p>20.1. Պետության և կառավարության ղեկավարների, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների համար սահմանափակված չէ պաշտոնը թողնելուց հետո մասնավոր հատված մտնելու հնարավորությունը</p>	<p>20.1.1. Պետության և կառավարության ղեկավարների, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների համար պաշտոնը թողնելուց հետո նախկինում իրենց ենթակայության ներքո գործող հաստատություններում աշխատելու հնարավորությունը սահմանափակող օրենսդրական նորմերի ընդունում և դրանց կիրառելիության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների սահմանում</p>	<p>20.1.1.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 2-րդ եռամսյակ)</p>

		<p>20.1.2. Գույքի և եկամուտների հայտարարագրերի համակարգի ներդրում՝ բացահայտելու և հետապնդելու համար այսպես կոչված չհիմնավորված հարստացման դեպքերը, այսինքն այն դեպքերը, երբ պետական ծառայողն ապրում է իր պաշտոնական եկամուտներին ոչ համարժեք, ներառյալ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գույքի և եկամուտների հայտարարագրերի ընդունումը,</li> <li>• Հայտարարագրերի վերլուծությունը, ուսումնասիրությունը և համադրումն այլ տեղեկատվության հետ,</li> <li>• Անհամապատասխանություններ (անհիմն հարստացման դեպքեր) հայտնաբերելու կամ կասկածներ ունենալու դեպքում իրավապահ մարմիններին տեղեկացնելու մեխանիզմները:</li> </ul>	<p>20.1.2.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)</p>
	<p>20.2. Իշխանության գործադիր ճյուղի և աուդիտորների կողմից նվերներ ստանալու կամ հյուրասիրություն ընդունելու սահմանափակումներ ստանալու մասին նորմերը չեն կիրառվում</p>	<p>20.2. 1. Պաշտոնի բերումով ստացված նվերները պետությանը հանձնելու կարգի դրույթների և դրանց խախտման համար պատասխանատվություն սահմանող նորմերի հստակեցում</p>	<p>20.2.1.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 2-րդ եռամսյակ)</p>
		<p>20.2.2. Պետական մարմիններում ներքին աուդիտորների կողմից պաշտոնի բերումով աշխատողների ստացած նվերները պետությանը հանձնելու կարգի խախտման նկատմամբ վերահսկողության իրականացման դրույթների սահմանում</p>	<p>20.2.2.1. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք (2009, 3-րդ եռամսյակ)</p>
	<p>20.3. Պրակտիկայում քաղաքացիները չեն կարող ողջամիտ ժամկետում և առանց խոչընդոտների ստանալ պետական պաշտոնյաների եկամուտների և գույքի մասին տեղեկատվություն</p>	<p>20.3.1. Ընթացակարգի դյուրինացում և կիրառման ապահովման մեխանիզմների նախատեսում</p>	<p>20.3.1.1. «Ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագրում ներառվող հրատարակման ենթակա տվյալները մամուլի միջոցներից տրամադրելու մասին» ընդունված կարգ (2009, 2-րդ եռամսյակ)</p>

<p>21. Ոստիկանության վստահելիությունը</p>	<p>21.1. Հաճախ բռնություն է կիրառվում ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների, ներառյալ լրագրողների նկատմամբ, սակայն չի դառնում քննության առարկա. հաճախ ոստիկանությունը ձերբակալություն է իրականացնում առանց ընթերականների, ծեծի է ենթարկում ձերբակալվածներին ձերբակալության կամ հարցաքննության ընթացում, խոստովանություն ստանալու համար խոշտանգումներ է իրականացնում, սակայն շատերն այս մասին չեն հայտնում՝ վախենալով «պատժից»</p>	<p>21.1.1. Բռնությունների գործադրման կամ փորձի, կաշառք վերցնելու, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցների կողմից թույլ տրված այլ օրինախախտումների կամ անգործության մասին տեղեկատվության արդյունավետ հավաքման և իրավապահ մարմիններին փոխանցման համակարգի ներդրում, ներառյալ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• թեժ գծի բացում կառավարությունում և ոստիկանությունում</li> <li>• թեժ գծով ստացված տեղեկատվության ստուգում, վերլուծություն, ամփոփում և ներկայացում համապատասխան պատկան մարմիններին</li> </ul>	<p>21.1.1.1. Թեժ գծի առկայություն Կառավարությունում և ոստիկանությունում (2009, 1-ին եռամսյակ)</p> <p>21.1.1.2. Թեժ գծով ստացված տեղեկատվության ընդունման, ստուգման, վերլուծություն, ամփոփում և համապատասխան պատկան մարմիններին ներկայացման կարգ (2009, 1-ին եռամսյակ)</p>
	<p>21.2. ստիկանության համակարգում մեծ տարածում ունի կոռուպցիան, սակայն կոռուպցիոն դեպքերը հաճախ չեն բացահայտվում և չեն դառնում քննության առարկա</p>	<p>21.2.1. Ոստիկանության գործունեության օրինականության և պատասխանատվության բարձրացում՝ ապահովելով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավաչափ և օրենքի պահանջներին համապատասխանող վարչական ակտերի կայացումը, ոստիկանության պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերի մատչելիությունը, ոստիկանության ծառայողների աշխատավարձերի զգալի բարձրացմանը զուգահեռ խստացնելով նրանց գործունեության օրինականության նկատմամբ հսկողական մեխանիզմները, բարձրացնելով ապօրինի վարձատրությունից ստացվող եկամուտների համար ռիսկայնության աստիճանը ու պատժի անխուսափելիությունը:</p>	<p>21.2.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ)</p> <p>21.2.1.2. Ըստ անհրաժեշտության օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)</p>
		<p>21.2.2. Ոստիկանության մարմինների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պատշաճ որակի ապահովում՝ նվազագույնի հասցնելով ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները, խրախուսելով</p>	<p>21.2.2.1. Ոստիկանության գործունեության նկատմամբ հասարակական վստահության պատշաճ մակարդակ ապահովելու նպատակով ոստիկանությանը կից</p>

		<p>հասարակության և ոստիկանության մարմինների միջև փոխգործակցությունը և քաղաքացիական մասնակցության մեխանիզմների ներդրումը, խթանելով հանրային իրազեկման բարձրացումը, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների, արչարարական գործընթացների պատշաճ լուսաբանումը:</p>	<p>ստեղծված հասարակական վերահսկողության խորհրդատվական մարմնի՝ հասարակական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացման ծրագիր (2009, 2-րդ եռամսյակ)</p> <p>21.2.2.2. Քաղաքացիների սպասարկման հաստատված և հրապարակված չափորոշիչներ (2009, 2-րդ եռամսյակ)</p> <p>21.2.2.3. Ծառայությունների մատուցման էլեկտրոնայնացում (2009, 4-րդ եռամսյակ)</p> <p>21.2.2.4. Քաղաքացիների իրավունքների և պարտականությունների, վարչարարական գործընթացների լուսաբանման ծրագիր (2009, 2-րդ եռամսյակ)</p>
	<p>21.3. Ոստիկանությունը չի գործում արդյունավետ և հաշվետու կերպով, ինչի արդյունքում ցածր է հանցագործություններից և բռնություններից քաղաքացիների և նրանց սեփականության պաշտպանության մակարդակը</p>	<p>21.3.1. Ոստիկանության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված հայեցակարգի մշակում և ընդունում՝ նախապես ապահովելով հանրային լայն քննարկումներ</p>	<p>21.3.1.1. Ոստիկանության գործունեության արդյունավետության բարձրացման հայեցակարգ (2009, 4-րդ եռամսյակ)</p>
	<p>21.4. Լուրջ հանցագործություններ տեղի ունենալու դեպքում քաղաքացիները հաճախ չեն դիմում ոստիկանություն և դրանք քննության չեն առնվում, ցածր է ոստիկանության գործունեության նկատմամբ հանրային վստահության մակարդակը</p>	<p>21.4.1. Ոստիկանության գործունեության, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցների թույլ տված չարաշահումների մասին լայն լուսաբանման ապահովում</p>	<p>21.4.1.1. «02» հաղորդաշարով պարբերաբար հեռարձակվող ոստիկանության աշխատակիցների թույլ տված չարաշահումների մասին լուսաբանող ռեպորտաժներ (շարունակական, սկսած 2009թ. 1-ին եռամսյակից)</p>

<p>22. Սեփականության իրավունքի պաշտպանություն</p>	<p>22.1. Սեփականության գրանցման համար կաշառք տալու դեպքեր հաճախ են պատահում, սակայն սակայն դրանք հազվադեպ են դառնում քննության առարկա</p>	<p>22.1.1. ՀՀ ԿԱ անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեում և Կառավարությունում թե՛ գծի ստեղծում՝ չարաշահումների բացահայտելիության մակարդակը բարձրացնելու նպատակով, ներառյալ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• թե՛ գծի բացում կառավարությունում և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում,</li> <li>• թե՛ գծով ստացված տեղեկատվության ստուգում, վերլուծություն, ամփոփում և ներկայացում համապատասխան պատկան մարմիններին</li> </ul>	<p>22.1.1.1. Թե՛ գծի առկայություն Կառավարությունում և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում (2009, 1-ին եռամսյակ)</p> <p>22.1.1.2. Թե՛ գծով ստացված տեղեկատվության ընդունման, ստուգման, վերլուծություն, ամփոփում և համապատասխան պատկան մարմիններին ներկայացման կարգ (2009, 1-ին եռամսյակ)</p>
	<p>22.2. Մտավոր սեփականության իրավունքը բավականաչափ պաշտպանված չէ</p>	<p>22.2.1. Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պաշտպանության համակարգի կատարելագործում</p>	<p>22.2.1.1. Հաստատված հայեցակարգ և գործողությունների ծրագիր (2009, 1-րդ եռամսյակ)</p>
	<p>22.3. Օրենքները և այլ իրավական ակտերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ գործարարական գործունեության և անհատների վրա, չեն ընդունվում քաղաքական կամ վարչական թափանցիկ գործընթացների միջոցով, դրանց մասին հասարակությունը պատշաճ կարգով չի իրազեկվում</p>	<p>22.3.1. Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման պարտադիր պահանջի ամրագրում</p>	<p>22.3.1.1. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (2009, 2-րդ եռամսյակ)</p>
	<p>22.4. Կորպորատիվ կառավարման մշակույթը զարգացած չէ</p>	<p>22.4.1. Միջազգային լավագույն փորձին համապատասխան կորպորատիվ կառավարման կամավոր կիրառման կողքսի մշակում, պետական կազմակերպություններում ներդրում, կիրառման արդյունքների գնահատում և ըստ անհրաժեշտության օրենսդրորեն պարտադրելու մեխանիզմների սահմանում</p>	<p>22.4.1.1. Կորպորատիվ կառավարման մշակված կողքս (2009, 4-րդ եռամսյակ)</p>

	22.5. Միջազգային չափանիշներին չեն համապատասխանում անվճարունակության (աննանկության) վերաբերյալ գործող իրավական նորմերը	22.5.1. Միջազգային լավագույն փորձի վերլուծության արդյունքում համապատասխան օրենսդրության մշակում	22.5.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր (2009, 3-րդ եռամսյակ) 22.5.1.2. «Սննանկության մասին» ՀՀ նոր օրենք (2009, 4-րդ եռամսյակ)
	22.6. Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն արդյունավետ չի գործում	22.6.1. Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման հայեցակարգի ընդունում, արդյունավետության չափորոշիչների սահմանում	22.6.1.1. Հաստատված հայեցակարգ և գործողությունների ծրագիր (2009, 3-րդ եռամսյակ)
23. Փողերի լվացում	23.1. Բարձր է հատկապես գործող բանկերի միջոցով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) տարածվածության մակարդակը	23.1.1. Միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) դեմ պայքարի միջոցառումների մշակում և իրականացում	23.1.1.1. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի եռամսյա ռազմավարության իրականացում (շարունակական)
24. Մարդկանց առևտուր	24.1. Մարդկանց առևտրի գոհերի պաշտպանությանն ուղղված կառավարության ջանքերն արդյունավետ չեն: Մարդկանց առևտրի դեմ պայքարին ուղղված միջոցառումները, մասնավորապես թրաֆիքինգի հետ կապված կոռուպցիայի դեմ պայքարի և գոհերի պաշտպանության հետ կապված, չեն համապատասխանում միջազգային չափանիշներին	24.1.1. Մարդկանց առևտրի դեմ պայքարին ուղղված օրենսդրական և այլ միջոցառումների, մասնավորապես թրաֆիքինգի հետ կապված կոռուպցիայի դեմ պայքարի և գոհերի պաշտպանությանն առնչվող, համապատասխանեցում միջազգային չափանիշներին	24.1.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով (2009, 3-րդ եռամսյակ) 24.1.1.2. Ըստ անհրաժեշտության համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 4-րդ եռամսյակ)
		24.1.2. Մարդկանց առևտրի գոհերի պաշտպանության և ռեաբիլիտացիայի պետական ծրագրի մշակում և իրականացում՝ միջազգային չափանիշներին համապատասխան միջոցառումները	24.1.2.1. Հաստատված ծրագիր (2008, 4-րդ եռամսյակ)

		24.1.3. Մարդկանց առևտրի գոհերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին պետական աջակցության իրականացում, ներառյալ ֆինանսական աջակցությունը	24.1.3.1. Պետական աջակցության ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
25. Բռնության գործադրմամբ կատարված հանցագործություններ	25.1. Բարձր է բռնությամբ կատարված հանցագործությունների քանակը	25.1.1. Բռնությամբ կատարված հանցագործությունների կանխարգելման ծրագրի մշակում և իրականացում	25.1.1.1. Հաստատված ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
26. Կազմակերպված հանցավորություն	26.1. Բարձր է կազմակերպված հանցավորության մակարդակը	26.1.1. Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ծրագրի մշակում և իրականացում	26.1.1. Հաստատված ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
	26.2. Կազմակերպությունների գրանցման ընթացակարգը բարդ է և չափազանց երկար է տևում	26.2.1. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման (գործունեություն սկսելու) ընթացակարգերի պարզեցում և կրճատում:	26.2.1.1. Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)
		26.2.2. Կազմակերպությունների պետական գրանցում իրականացվող ընթացակարգերի միավորում մեկ միասնական ընթացակարգի մեջ՝ գործարարին մեկ մարմին այցելելու հնարավորություն տալու նպատակով:	26.2.2.1. Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)
		26.2.3. Բիզնեսի փակման դրույթների կատարելագործում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան	26.2.3.1. Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 1-ին եռամսյակ)

**Արդար կառավարում:** Չայնի լսելիություն և հաշվետվողականություն

<b>Ինդիկատորի ենթաբաղադրիչ</b>	<b>Ինդիկատորի կատարողականի վրա ազդող գործոններ</b>	<b>Առաջարկվող գործողություններ/ընթացիկ բարեփոխումներ</b>	<b>Ակնկալվող արդյունք և ժամկետ/նշում կատարման մասին</b>
27. Չսպումներ և հակակշիռներ	27.1. Աուդիտ իրականացնող մարմինների միջև լիազորությունները հստակ բաշխված չեն, բյուջետային միջոցների և օտարերկրյա պետությունների կամ միջազգային	27.1.1. Միջազգային լավագույն փորձի հիման վրա արտաքին աուդիտի համակարգի բարեփոխում, ներառյալ. <ul style="list-style-type: none"> <li>արտաքին աուդիտի համապատասխանեցում միջազգային չափանիշներին,</li> </ul>	27.1.1.1. Արտաքին աուդիտի համակարգի բարեփոխման հայեցակարգ, համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 4-րդ

	<p>կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի օգտագործումը հաճախ քննադատության է արժանանում վերահսկիչ պալատի կողմից, սակայն այդ քննադատությանը որևէ գործողություն չի հետևում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• պետական մարմինների գործունեության նկատմամբ հսկողական լիազորություններ իրականացնող մարմինների լիազորությունների հստակեցում՝ բացառելով կրկնությունները</li> <li>• խախտումներ թույլ տալու կամ պետական միջոցները ոչ արդյունավետ օգտագործելու դեպքում համապատասխան հետևանքների կիրառման մեխանիզմների մշակում, ներառյալ համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ բացի քրեական պատասխանատվությունից պատասխանատվության նաև այլ միջոցների կիրառման հնարավորության ամրագրում օրենսդրությամբ</li> </ul>	<p>եռամսյակ)</p>
<p>28. Հանրային վստահություն, պետական պաշտոնյաների հաշվետվողականությունը</p>	<p>28.1. Ցածր է հասարակության հետ իրականացվող պետական քաղաքականության համաձայնեցվածության և իշխանությունների կողմից դրված նպատակները և տրված խոստումներն իրականացնելու քաղաքական կամքի առումով հասարակության վստահության մակարդակը</p>	<p>28.1.1. Քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի ընթացքում հասարակության մասնակցության ծրագրի մշակում և իրականացում, իրականացվող քաղաքականության շուրջ հանրային բանավեճերի և հասարակական ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ քննարկումների անցկացման մշակույթի ձևավորում՝ նախքան որոշումներ կայացնելը</p>	<p>28.1.1.1. Հանրային քննարկման նպատակով իրականացվող ծրագրերի և իրավական ակտերի նախագծերի պարտադիր տեղադրում համապատասխան պետական կառավարման մարմինների կայքերում (2009, 1-ին եռամսյակից, շարունակական)</p> <p>28.1.1.2. Քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի ընթացքում հասարակության մասնակցության հաստատված ծրագիր (2009, 3-րդ եռամսյակ)</p>
		<p>28.1.2. Նախապես դրված նպատակների և սահմանված արդյունքների ապահովման նկատմամբ հաշվետվության համակարգի ներդրում</p>	<p>28.1.2.1. Պետական կառավարման մարմինների ռազմավարական ծրագրերի մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրում (2009, 3-րդ եռամսյակ)</p>

	28.2. Չածր է հանրային պաշտոնյաների հաշվետվողականության աստիճանը, որոշումներ կայացնելիս պաշտոնատար անձինք ելնում են ընկերական-բարեկամական կամ հովանավորչական կապերից կամ գործում են որոշ օլիգարխների ազդեցություն ներքո	28.2.1. Պետական մարմինների աշխատողների վարքագծի կանոնների և պատասխանատվություն սահմանող նորմերի սահմանում	28.2.1.1. Հաստատված կանոններ (2009, 2-րդ եռամսյակ)
29. Տեղեկատվության ստացման հանրային մատչելիություն	29.1. Քաղաքացիները և լրատվամիջոցները տեղեկատվություն ստանալու գործընթացում հաճախ խոչընդոտների են հանդիպում	29.1.1. Բոլոր պետական մարմիններում քաղաքացիների ընդունելության կարգերի հաստատում, ներառյալ ընդունելության կոնկրետ օրերի, դիմումների ընդունման և հիմնավոր պատասխաններ ներկայացնելու կարգի սահմանում:	29.1.1.1. Հաստատված կարգեր բոլոր պետական մարմիններում (2009, 1-ին եռամսյակ)
		29.1.2. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ քաղաքացիների և զլմների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման դեպքում համապատասխան պաշտոնատար անձանց կարգապահական և այլ պատասխանատվություն ենթարկելու հնարավորության և մեխանիզմների նախատեսում օրենսդրությամբ	29.1.2.1. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)
30. Տեղաշարժման ազատություն	30.1. Վիզաների և երկիր մուտքի և ելքի հետ կապված այլ փաստաթղթերի տրամադրումը հաճախ անտեղի ձգձգվում է, հաճախ են պատահում պաշտոնատար անձանց կողմից կաշառք պահանջելու դեպքերը	30.1.1. Փաստաթղթերի տրամադրման և այլ ծառայությունների մատուցման պարզ և հստակ ընթացակարգերի սահմանում, ժամկետների կրճատում և հստակեցում	30.1.1.1. Խնդրի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն և լուծման ուղիներ ներառող միջոցառումների ծրագիր (2009, 3-րդ եռամսյակ) 30.1.1.2. Օրենսդրական համապատասխան փոփոխություններ (2009, 3-րդ եռամսյակ)

**Ներդրում մարդկային ռեսուրսներում:** Իմունիզացիայի մակարդակը

<b>Ինդիկատորի ենթաբաղադրիչ</b>	<b>Ինդիկատորի կատարողականի վրա ազդող գործոններ</b>	<b>Առաջարկվող գործողություններ/ընթացիկ բարեփոխումներ</b>	<b>Ակնկալվող արդյունք և ժամկետ/ նշում կատարման մասին</b>
--------------------------------	--	--	--

<p>31. Իմունիզացիայի մակարդակ</p>	<p>31. 1. Իմունիզացիայի մակարդակը ցածր է:</p>	<p>31.1.1. Մշակել ՀՀ իմունականխարգելման ազգային ծրագիր.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Պլանային պատվաստումներով ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը հասցնել և պահպանել 95%, իսկ մարզային մակարդակի ցուցանիշը առնվազն 90% մակարդակի վրա</li> <li>• Ստեղծել իմունականխարգելման գործընթացն ապահովող մասնագիտական աշխատանքային խումբ:</li> <li>• Ապահովել հանրապետությունը որակյալ պատվաստանյութերով և ապահովել օգտագործվող պատվաստանյութերի որակը և անվտանգ ներարկումները:</li> <li>• Ձեռնարկել միջոցառումներ պատվաստանյութերի կորստի թույլատրելի սահմանը չզերազանցելու որդրողթյամբ՝ նվազեցնելով պատվաստանյութերի կորստի գործակիցը:</li> <li>• Չարգացնել իմունականխարգելման գործընթացի մոնիթորինգի համարգը:</li> <li>• Ապահովել իմունականխարգելման գործընթացն իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների շարունակական կատարելագործումը:</li> <li>• Բարձրացնել բնակչության իրազեկությունը իմունականխարգելման մասին:</li> <li>• Ապահովել Իմունականխարգելման ազգային ծրագրի կայուն ֆինանսավորումը Կառավարության կողմից:</li> </ul>	<p>31.1.1.1. ՀՀ իմունականխարգելման ազգային ծրագրի բազմամյա պլան (2009, 4-րդ եռամսյակ)</p>
	<p>31.2. Իմունիզացիայի պաշտոնական տվյալները և անցկացված հարցումների արդյունքները են համապատասխանում</p>	<p>31.2.1. Անհամապատասխանության պատճառները պարզելու նպատակով հանձնաժողովի ստեղծում և ուսումնասիրության իրականացում: Պատճառները պարզելուց հետո դրանց վերացմանն ուղղված առաջարկների և գործողությունների ծրագրի ներկայացում</p>	<p>31.2.1.1. Գործողությունների ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)</p>

	31.3. Պատվաստանյութերը երբեմն չեն գտնվում պատշաճ վիճակում, պատվաստումները չեն կատարվում պատշաճ կերպով, սառցային շղթային պահպանման պահանջները երբեմն խախտվում են, չափազանց մեծ է օգտագործման համար ոչ պիտանի ներարկիչների քանակը:	31.3.1. Իմունիզացիոն ներարկումների անվտանգության և արդյունավետության ապահովման աշխատանքային պլանի մշակում	31.3.1.1. Աշխատանքային պլան (2009, 4-րդ եռամսյակ)
--	--	---	---

*Ներդրում մարդկային ռեսուրսներում: Առողջապահական ծախսեր*

<b>Ինդիկատորի ենթաբաղադրիչ</b>	<b>Ինդիկատորի կատարողականի վրա ազդող գործոններ</b>	<b>Առաջարկվող գործողություններ/ընթացիկ բարելավումներ</b>	<b>Ակնկալվող արդյունք և ժամկետ/նշում կատարման մասին</b>
32. Առողջապահական ծախսեր	32.1. Ցածր է առողջապահության հատկացումների մասնաբաժինը ՀՆԱ-ում	32.1.1. ՀՆԱ-ում առողջապահական ծախսերի մասնաբաժնի ավելացման և ծախսերի արդյունավետության բարձրացման ծրագրի մշակում	32.1.1.1. Հաստատված ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
	32.2. Առողջապահական ոչ պաշտոնական և պաշտոնական ծախսերի տարբերությունը չափազանց մեծ է	32.2.1. Պետական բժշկական հաստատություններում կորպորատիվ կառավարման համակարգի ներդրում	32.2.1.1. Հաստատված ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
	32.3. Շրջաններում բժշկական ծառայություններն անմատչելի են մասնագետների պակասի պատճառով	32.3.1. Հանրապետության մարզերի ապահովում որակյալ բժիշկներով	32.3.1.1. Հաստատված ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)

*Ներդրում մարդկային ռեսուրսներում: Կրթական ծախսեր*

33. Կրթական ծախսեր	33.1. Ցածր է կրթական հատկացումների մասնաբաժինը ՀՆԱ-ում	33.1.1. ՀՆԱ-ում կրթական ծախսերի մասնաբաժնի ավելացման և ծախսերի արդյունավետության բարձրացման ծրագրի մշակում	33.1.1.1. Հաստատված ծրագիր (2009, 4-րդ եռամսյակ)
--------------------	--	--	--